ԿԱՐԾԻՔ

ԳԱՅԱՆԵ ՍԵՐԳԵՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ»
թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված
ԺԳ. 00. 02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (երաժշտություն)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար

Գայանե Սերգեյի Հարությունյանի «Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց» վերնագրով ԺԳ 00.02 թվանիշով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (Երաժշտություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը նվիրված է անչափ կարևոր ու միաժամանակ բարդ խնդրի: Արդի աշխարհաքաղաքական վայրիվերումների, համընդհանուր գլոբալացման, Երկիր մոլորակի այս ու այն կետում բռնկվող պատերազմների ու քաղաքական ցնցումների պայմաններում ազգային ինքնության պահպանումն ու զարգացումը կարևորագույն հարցերից է մնում, հատկապես եթե խոսքը գնում է աշխարհասփյուռ հայության մատաղ սերնդի դաստիարակման մասին:

Ատենախոսության հեղինակն այս իմաստով բավական ծանր առաքելություն է ստանձնել, քանի որ ինֆորմացիոն, հաղորդակցական, համացանցային աներևակայելի հնարավորությունների պայմաններում առաջարկում է գտնել միջոցներ, ձևեր՝ երեխայի մեջ ազգային ինքնագիտակցության զգացողության, ազգային մշակույթի, մասնավորապես երաժշտության հանդեպ հետաքրքրություն, ոգևորություն և սեր

դաստիարակելու, սերմանելու համար: Հիրավի, պետք է տիրապետել հսկայածավալ նյութի՝ մանկավարժության ու հոգեբանության, երաժշտության ընկալման և մատուցման, նաև հենց երաժշտական կրթության մեթոդաբանության ասպարեզներում՝ իր առջև դրված խնդիրն իրականացնելու նպատակով:

Դիսերտանտը թեմայի առնչությամբ ծավալուն մատենագիտական նյութ է ուսումնասիրել և համակարգել: Աշխատության առաջին և երկրորդ գլուխները հիմնականում գոյություն ունեցող հսկայական պատմական և մեթոդական մասնագիտական աղբյուրների ուսումնասիրության վրա կատարված եզրակացություններն են, որոնց վրա էլ կառուցվում է աշխատանքի մեթոդաբանությունը և գաղափարական ուղղվածությունը: Աշխատանքի վերջում ներկայացված հսկայական մատենագիտական ցանկը, ինչպես նաև պատշաճ բծախնդրությամբ և գիտական ապարատի պահանջներին համապատասխանող ծանոթագրություններն ու հղումները վկայում են այն մասին, որ դիսերտանտը իսկապես տիրապետում է նյութին և համոզիչ ներկայացնում է խնդրո առարկան: Այս, ինչպես նաև աշխատանքի թեմայի ընտրության, գիտական ձևակերպման խնդրում անհրաժեշտ ենք համարում ընդգծել ասպիրանտի գիտական ղեկավարի՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Վաղարշակի Յուզբաշյանի կարևոր մասնագիտական դերակատարումը:

Աշխատանքի արդիականությունը ակնհայտ է, քանի որ մեր ժողովրդի ճակատագրում Սփյուռքն ազգային գոյապահպանման խնդրում կարևոր դերակատարում է ունեցել և այսօր էլ ունենում է՝ ընդլայնվելով ու ձևափոխվելով, ենթարկվելով ներկա աշխարհաքաղաքական ու տնտեսական պարտադրանքներին, հարմարվելով տվյալ երկրի մենթալ ու կրոնական, հոգեբանական ու սոցիալական յուրահատկություններին: Այդուհանդերձ, ինչպես նշում է դիսերտանտը, «սփյուռքահայ երեխաների նախադպրոցական կրթությունն այսօր բախվում է ազգային ինքնության պահպանման հրատապ անհրաժեշտության հետ»: Եվ դրա լուծման արդյունավետ

միջոցներից մեկն էլ նախադպրոցական երաժշտական դաստիարակության մեթոդաբանության մշակումն ու մոդելավորումն է:

Ներկայացվող աշխատության գիտական նորույթը հենց սոյուռքի նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության դաստիարակության երաժշտական բաղադրիչի մեթոդական ուսումնասիրությունն է, ընդ որում, խնդրո առարկան քննվում է ոչ միայն պատմատեսական նյութի ուսումնասիրման և համակարգման ճանապարհով, այլև հիմնվում է սեփական փորձի հաջող արդյունքների հիման վրա մշակված մանկավարժական մեթոդաբանության վրա: Ատենախոսության կարևորագույն դրական կողմերից ենք համարում դիսերտանտի՝ Գայանե Հարությունյանի ոչ միայն հետազոտական, վերլուծական ընդհանրացումների կարողությունները, այլև, առաջին հերթին գործնականում հմուտ մանկավարժի, դաստիարակի հմտությունների վրա հիմնված մտահանգումները: Այս հանգամանքը նույնպես կցանկանայինք ընդգծել:

Ատենախոսության ընդհանուր ծավալը 175 համակարգչային էջ է, այն կազմված է ներածությունից, երեք գլխից, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, վեց հավելվածից, ներառում է աղյուսակներ, տրամագիր, գծապատկեր:

Ներածության մեջ (էջ 3-12) հիմնավորվում է ընտրված թեմայի արդիականությունը, գրականության քննությամբ ներկայացվում է խնդրի մշակվածության աստիճանը, մեթոդաբանությունը, սահմանվում է աշխատանքի նպատակը, գործնական փորձաքննության հիմնական փուլերն ու արդյունքները:

Առաջին գլխում (էջ 13-40)՝ «Հայ երաժշտամանկավարժական մտքի զարգացման պատմական նախադրյալները», ժամանակագրական հսկայական տիրույթի համատեքստում ներկայացվում է խնդրի պատմական ուղին, արժևորվում է հայ երաժշտարվեստի ականավոր գործիչների տեսական միտքը, փորձ է արվում համակարգել ազգային կոմպոզիտորական դպրոցի գործնական կարևոր դերակատարումը ազգային ինքնության պահպանման ու շարունակականության

գործում: Ընդհանուր ակնարկով ներկայացվում է առկա գրականության ընդհանուր բնութագիրը՝ իր ողջ բազմազանությամբ. հայ մանուկների համար ստեղծված երկերից, մինչև երգ-երաժշտության դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, երգարաններ ու ժողովածուներ: Հարկ ենք համարում ընդգծել, որ դիսերտանտի ուշադրությունից չեն վրիպել երեխաների երաժշտական դաստիարակության ասպարեզում թե՛ մեր ռահվիրաների կողմից՝ հարյուրամյակների ընթացքում ստեղծված ժառանգությունը, և թե՛ նորօրյա մասնագետների կազմած ձեռնարկները՝ համալրված նորագույն պահանջներին համապատասխան QR կոդերով, խտասալիկներով, տեսա-ձայնային վերարտադրման հնարավորություններով:

Երկրորդ գլխում (էջ 41-81)՝ «Նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման տեսական-մեթոդաբանական հիմքերը», տրվում է ուսումնասիրության առանցքային եզրույթի՝ «ազգային ինքնության» սահմանումը, որպես «տվյալ ազգի մտածելակերպի, արժեհամակարգի, վարքագծի, դիրքորոշումների սիմվոլների, բարոյական նորմերի, պատմական հիշողության, սոցիալ-հոգեբանական բնութագրերի ամբողջություն» (էջ 41): Եվ, ինչպես նշում է դիսերտանտը աշխատանքի 44-րդ էջում, այդ ինքնության պահպանման շնորհիվ է, որ «հայ ժողովուրդն, ապրելով քաղաքական, տնտեսական և աշխարհագրական դժվարին պայմաններում, կարողացել է հաղթահարել բոլոր փորձություններն ու հարատևել»:

Այդուհանդերձ, միակ հարցը, որ փոքր-ինչ տարակուսանք է առաջացնում վերաբերում է աշխատանքի հենց այս կարևորագույն, առանցքային դրույթին: Արդյո՞ք նախադպրոցական տարիքում երեխայի հոգեբանական, գիտակցական, անգամ ֆիզիոլոգիական հասունացման աստիճանը բավարար է ընկալելու, յուրացնելու բարդագույն արժեհամակարգային հասկացություններ, այդ թվում՝ ազգային ինքնագիտակցության ձևավորումը: Քանի որ նույն այս գլխի էջ 43-ում, վկայակոչելով Ժ.Պիաժեին, դիսերտանտը նշում է, որ երեխայի մտածողության զարգացման ընթացքում Պիաժեն առանձնացնում է էթնիկ բնութագրիչների ձևավորման և

զարգացման երեք փուլ. համապատասխանաբար՝ 1-ին փուլը 6-7 տարեկանից, 2-րդը՝ 8-9 տարեկանից, և 3-րդը՝ 10-11 տարեկանից, «երբ լիովին ձևավորվում է ազգային ինքնագիտակցությունը...»: Ասվածից հետևում է, որ նախակրթարանում, այսինքն՝ մինչև 6 տարեկանը, երեխան դեռևս պատրաստ չէ ընկալել ազգային ինքնության, ինքնագիտակցության կարևոր արժեքները:

Ուշագրավ է աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթավերնագրի բովանդակությունը, որտեղ խոսքը գնում է երեխայի ընդհանուր և հատուկ ընդունակությունների զարգացման մասին: Հիմնվելով օտարազգի և հայ հոգեբանների, մանկավարժների, ֆիզիոլոգների և գեղագետների ուսումնասիրությունների վրա՝ Դիսերտանտը հաստատում է, որ «երաժշտական արվեստը, լինելով հասարակական գիտակցության կարևոր ձևերից մեկը, համարվում է անձի երաժշտական մտածողության զարգացման և գեղագիտական դաստիարակության միջոցներից մեկը»: Իր բովանդակությամբ աշխատանքի այս ենթավերնագիրը, կարծում ենք, առավել համապատասխանում է առաջին գլխին, որտեղ ներկայացվում են ուսումնասիրված գրականության հիմնական դրույթները:

Ատենախոսության երրորդ գլուխը (էջ 82-162)՝ «Նախադպրոցականների ազգային ինքնության զարգացման մեթոդական ապահովումն ու դրա փորձարարական հիմնավորումը» ամենակարևոր և արժեքավոր նյութն է բովանդակում, քանի որ արծարծում է հեղինակի սեփական բազմամյա մանկավարժական գործունեության պրակտիկ արդյունքները: Աշխատանքի այս գլխի չորս ենթաբաժիններում խնդրո առարկան լուսաբանվում է ամենատարբեր բազմաբաղադրիչ և համապարփակ հիմնավորումներով:

Ա/ ներկայացվում են ազգային ինքնության զարգացվածության մակարդակների թեստային հայտորոշման չափանիշները;

Բ/ ներկայացվում է ֆոկուս խմբերում երաժշտության միջոցով երաժշտական ընդունակությունների և ազգային ինքնության զարգացման մեթոդիկայի կիրառման արդյունքները;

Գ/ հիմնավորվում է դասերի ընթացքում կիրառվող միջոցների /գույն, շարժում, հնչյուն դիդակտիկ նյութ, համակարգչային խաղ և այլն/ արդյունավետությունը;

Դ/ վերլուծության են ենթարկվում և մեկնաբանվում գիտափորձի նախնական և տարեվերջյան դրական արդյունքները;

Ե/ ներկայացվում է նախադպրոցականների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման փորձարարական ուսումնական ծրագիրը, վերջինիս նպատակը, խնդիրները, վերջնարդյունքները, դասընթացի կառուցվածքն ու թեմատիկ պլանը:

Եզրակացություններում (էջ 163-165) հանրագումարի են բերվել ուսումնասիրության կարևոր արդյունքները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են վեց տպագիր հոդվածներում: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ՍԵՐԳԵՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ աշխատանքը շարադրված է գեղեցիկ հայերենով, համոզիչ է և հիմնավորված: Ատենախոսության անվիճելի առավելություններից մեկն այն է, որ աշխատանքում արծարծված դրույթները պրակտիկ հիմնավորված են սեփական մանկավարժական փորձառությամբ:

Գայանե Հարությունյանն ատենախոսությանը մոտեցել է ամենայն պատասխանատվությամբ՝ դրսևորելով բարձր պրոֆեսիոնալիզմ, թեմային առնչվող ծավալուն գրականության տիրապետում, տեսական և գործնական համապարփակ գիտելիքներ, թեմայի լուսաբանման նպատակաուղղվածություն և մեծ ոգևորություն:

Աշխատանքն ընդհանուր առմամբ իրականացվել է մեծ բծախնդրությամբ և գիտական պարկեշտության չափանիշներին համապատասխան, ինչի վկայությունը օգտագործված գրականության պատկառելի ցանկն է: Վստահ եմ, այն իր արժանի տեղը կզբաղեցնի երաժշտական կրթության հիմնախնդիրներին նվիրված

ուսումնասիրությունների կողքին և կարևոր գործնական մեթոդական օգնություն կարող է ծառայել Հայաստանի և Սփյուռքի նախադպրոցական երեխաներին ազգային ինքնագիտակցության ոգով դաստիարակման հարցում:

Գայանե Սերգեյի Հարությունյանի «Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իրականացված է ակադեմիական ազնվության պահանջներին համապատասխան, իսկ ատենախոսը բոլոր հիմքերն ունի հայցելու ԺԳ 00.02 թվանիշով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (Երաժշտություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ, միջնորդում եմ Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի 020 մասնագիտական խորհրդի մեծարգո անդամներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ԵՊԿ ռեկտորի պաշտոնակատար,
արվ. թեկնածու, դոցենտ **Ծովինար ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ԵՊԿ ռեկտորի պաշտոնակատար, արվ. թեկնածու, դոցենտ Ծովինար Մովսիսյանի ստորագրությունը վավերացնում եմ՝
ԵՊԿ գիտքարտուղար
արվ. թեկնածու, դոցենտ **Օլգա ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ**

20.06.2024թ.